ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԳՈՌ ՍՐԿ. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅ-ԱՍՈՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Է. ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Մորիկ կայսեր սպանությունից (602 թ.) հետո, օգտվելով գահ բարձրացած Փոկասի (602-610) դեմ բռնկված ապստամբություններից, Խոսրով Բ. Փարվեզը պատերազմ է սկսում Բյուզանդիայի դեմ[1]: Պարսկական զորքը, Խոսրով Բ. Փարվեզի գլխավորությամբ շարժվելով արևմուտք, հասնում է պարսկաբյուզանդական սահմանին գտնվող Դարա քաղաքը եւ պաշարում այն[2]: Գրավելով Դարան՝ պարսից թագավորը շարժվում է Եդեսիա քաղաքի վրա եւ գրավում այն[3]: 607-610 թթ. պարսկական զորքը Միջագետքում եւ Ասորիքում գրավում է Ամիդ, Թելա, Ռաշայն, Մարդե եւ Անտիոք քաղաքները[4]: Այս ժամանակահատվածում ռազմական գործողություններ են ծավալվում Հայաստանում: Պարսիկները մեկը մյուսի հետեւից գրավում են Կարին, Սատաղ, Առաստիա եւ Նիկոպոլիս քաղաքները, որից հետո պարսից զորքը վերադառնում է Պարսկաստան[5]:

---

1 Տե՛ս «Տեսոն Միքայէլի Ասորւոց Պատրիարքի ժամանակագրութիւն», Երուսաղէմ, 1871, էջ 283-284:

2 Տե՛ս **Н. Пигулевская**, *Сирийские Источники По истории Народов СССР*, Москва, 1941, էջ 80-90:

3 Բյուզանդական զորավար Ներսեսը, ապստամբելով Փոկասի դեմ եւ իր զորքով փակվելով Եդեսիայում, կոչ էր արել Խոսրով Փարվեզին պատերազմ սկսել կայսրության դեմ: Խոսրովը, օգտվելով Ներսեսի ապստամբությունից, շտապեց իրականացնել իր ռազմական ծրագրերը: Փոկասը իր զորավարներից Գերմանին ուղարկում է հնազանդեցնելու Ներսեսին: Խոսրով Փարվեզը վրա հասնելով ջարդում է քաղաքը պաշարող բյուզանդական պատժիչ զորքը, որից միայն քչերին է հաջողվում փախուստի դիմել: Ներսեսը մի փղայի թագավորական հանդերձանք է հագցնում, գլխին պսակ դնում եւ դուրս բերում Խոսրով Փարվեզի մոտ՝ ասելով, թե դա Մորիկ կայսեր որդի Թեոդոսն է: Խոսրովը մեծ խնդությամբ ընդունում է այդ փղային, այնուհետեւ իր հետ վերցնելով, վերադառնում է՝ թագավորական պատիվներ տալով նրան («Հայ Ժողովրդի Պատմություն», հ. Բ., Երեւան, 1987, էջ 284):

4 Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին», հ. VI, թարգմ.՝ Հ. Բարթիկյան, Երեւան, 1983, էջ 13-15:

5 Այս ռազմական գործողությունների ժամանակ Կարին քաղաքի հույներին եւ, ըստ երեւույթին, նաեւ հունադավան հայերին հալածում է մի պարսիկ զորավար՝ Շահեն պատգոսպանը: Պարսիկները շատ դաժան են վարվում Կարինի բնակիչների հետ՝ Խոսրովի հրամանով վերաբնակեցնում են Պարսկաստանի սահմանամերձ տարածքներում. նրանց հետ էր նաեւ հայ քաղկեդոնականների կաթողիկոս Հովհաննեսը: Վերջինս ճանապարհին վախճանվում է եւ թաղվում Ավան գյուղում, իր կառուցած եկեղեցում: Պետք է նշել, որ նրա մահանալուց հետո կաթողիկոսարանը փակվում է ընդմիշտ (**Jonathan Shepard**, History of the Byzantine Empire, Cambridge, 2008, p. 337-339 նաեւ՝ «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին», հ. VI, էջ

610 թ. Կ. Պոլսում տեղի է ունենում մի արյունահեղ հեղաշրջում, որին զոհ է գնում Փոկաս կայսրը[6]: Կայսերական գահն անցնում է Հերակլին (610-641)[7]: Գահ բարձրանալուց հետո Հերակլն անմիջապես խաղաղություն է խնդրում Խոսրովից: Բացասական պատասխան ստանալով պարսից թագավորից՝ Հերակլ կայսրը Փիլիպկոսի գլխավորությամբ զորք է ուղարկում արևելք: Վերջինս մեծ զորքով արշավում է Կապադովկիայի Կեսարիա քաղաքի վրա: Փիլիպկոսի արշավանքը հնարավորություն տվեց բյուզանդացիներին որոշ ժամանակով նորից տիրանալ Կեսարիային: Այստեղ հույները ժամանակավոր հաջողության են հասնում, սակայն, կրկին փախուստի են դիմում:

Համալրվելով՝ պարսիկները գրավում են Տարսոն քաղաքը եւ իրենց ենթարկում ամբողջ Կիլիկիան: Կիլիկիայից վերադառնալով՝ պարսից զորքը հաջորդ տարի՝ 614 թ., արշավում է Երուսաղեմի վրա: Տասնինն օր պաշարումից հետո պարսիկները գրավում են քաղաքը[8]: Երբ պարսիկները մուտք են գործում քաղաք, բնակչության զգալի մասին սրի են քաշում, իսկ ողջ մնացածներից շատերին գերեվարում, որոնց մեջ էին նաեւ Երուսաղեմի պատրիարք Զաքարիան եւ Խաչապանը[9]:

Ստեղծված վիճակում Հերակլը մի շարք միջոցառումներ է ձեռնարկում, որոնք հնարավորություն են տալիս կայսրությանն ամրապնդել դիրքերն ու անցնել հակահարձակման[10]: Խոսրով Փարվեզի հզորության առաջ վհատված ու անճարացած՝Հերակլ կայսրը՝ «Աստուծո տեղապահը» (այսպես էին կոչում նրան ժամանակակից հույները), վերջապես կենդանության նշան ցույց տվեց: Նա վրեժխնդիր եղավ այն անարգանքի համար, որ պարսիկները հասցրել էին Փրկչին ու նրա եկեղեցուն եւ նորանոր հաղթանակներով հետզհետե վերադարձրեց գրավված երկրները: Հերակլին արիության ոգի ներշնչողը Կ. Պոլսի պատրիարք Սերգիոսն էր. վերջինս հոգաց պատերազմական ծախսերը՝ գործածելով եկեղեցական սպասքը:

Հերակլ թագավորն իր արշավանքն սկսեց 623 թ., եւ առաջին հաջողությունը եղավ այն, որ գրավեց Գանձակ քաղաքը: Այնուհետեւ Հերակլը գրավում է Պարտավը: Պարտության մատնելով պարսից զորքը՝ Սյունիքի վրայով անցնում է Նախճավան[11]: Հաջողության հասնելով Արճեշում՝ կայսրը գնում է Մարտիրոսպոլիս (Տիգրանակերտ), այնուհետեւ՝ Ամիդ. բյուզանդացիներին հետապնդող պարսից զորքը կրկին անհաջողության է մատնվում: Հերակլ կայսրը մեկը մյուսի հետեւից գրավում է Սամոսատը, Գերմանիկեն, Ադանան, Տփխիսը, եւ հաջողությունը պսակվում է նրանով, որ կայսրը գրավում է պարսիկների մայրաքաղաք Տիզբոնը[12]: Երկու պետությունների միջեւ հաշտության պայմա-

14-15):

6 Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին», հ. VI, էջ 14:

7 **John bishop of Nikiu**, *Chronicle*, London, 1916, chapter CVIII-CXVIII.

8 Տե՛ս «Միքայէլի Ասորւոց Պատրիարքի ժամանակագրութիւն», էջ 292-293:

9 Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին», հ. VI, թարգմ.՝Հ. Բարթիկյան, էջ 15: Հմմտ. «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի», ի Վենետիկ ի Սուրբ Ղազար, 1862, էջ 61-62: Հմմտ. «Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 89:

10 Տե՛ս **Ю. А. Кулаковский**, *История Византии*, т. 3, Санкт-Петербург, 1996, էջ 55-73:

11 Տե՛ս «Սեբէոս եպիսկոպոսի Պատմութիւն», Երեւան, 1939, էջ 124-126:

12 Տե՛ս **Jonathan Shepard**, *History of the Byzantine Empire*, էջ 227-228:

նագիր է կնքվում: Այս պայմանագրի համաձայն՝ Հայաստանի զգալի մասն անցավ հույներին, այն ինչ Մորիկ կայսեր ժամանակ էր[13]:

Է. եւ Ը. դարերը մեծ դեր են խաղացել Հայոց պետականության եւ Եկեղեցու ռազմավարության զարգացման գործում՝ կազմակերպվածության, խիստ կարգուկանոնի, ծեսի եւ վարդապետական բանաձեւի առումով[14]: Այս շրջանը մեզ համար կարեւոր էր, քանի որ բյուրեղացավ Հայ Եկեղեցու վարդապետությունը: Հայ Եկեղեցին պաշտոնապես հայտնեց իր դիրքորոշումը Քաղկեդոնի ժողովի վերաբերյալ: Որպես նախաշավիղ այս գործընթացի՝ 506 թ. Դվինում Բաբկեն Ութմսեցի Կաթողիկոսը (490-516 թթ.) մի ժողով է հրավիրում՝ հայ, վրաց եւ աղվանից եպիսկոպոսների, ինչպես նաեւ փասնչորս հայ նախարարների մասնակցությամբ[15]: Ժողովը զբաղվում է այդ ժամանակ արդեն հրատապ դարձած նեստորականության հարցով, ինչպես նաեւ «Հենոտիկոնի»՝ հակաքաղկեդոնական մտքի քննությամբ եւ վերջինիս ընդունմամբ: Այս մասին վկայում է նաեւ Զ. դարի հայտնի հակաքաղկեդոնական ասպվածաբան ու Պարսից աշխարհում նեստորակնության դեմ պայքարող Սիմեոն Բեթ-Արշամացին. «Այս նույն ժամանակ հայերը ընդունել են Զենոնի «Հենոտիկոնը» իրենց 32 եպիսկոպոսների եւ մարզպանի հետ միասին»[16]: Բաբկեն Կաթողիկոսի «Թուղթ Հայոց ի Պարսս առ ուղղափառս» գրության մեջ խոսվում է այն մասին, որ Պարսկաստանի ուղղափառ քրիստոնյաները ծանր վիճակում են, որի մեջ վերջիններս հայտնվել էին նեստորականների ոտնձգությունների պատճառով[17]: Եւ այդ վիճակից դուրս գալու նպատակով է, որ նրանց պատգամավորությունն օգնության խնդրանքով դիմում է Հայոց Եկեղեցուն՝ որպես այս դարաձաշրջանում ուղղափառության միակ ջահակիր. «Հասանք եւ առ ձեզ վասն նորին վտանգի եւ նեղութեան, գտանել աւգնականութիւն վկայութեամբ աստուածային գրոց, որպէս զի հաստատուն կայցեն անշարժ սրբոց հարցն աւանդութիւնք եւ պատուէրք»[18]: Ժողովի ժամանակ Բաբկեն Ութմսեցի Կաթողիկոսը ներկայացնում է Հայ Եկեղեցու դավանանքը եւ հետո անուն առ անուն նզովում է նեստորականության բոլոր դեմքերին[19]: Ճիշտ է՝ Դվինի ժողովում քաղկեդոնականությունը հանանե հանվանե չի դատապարտված եւ նզովված, սակայն տվյալ վարդապետության ու նեստորականության միջեւ տարբերակում չի դրվել: Եւ դեռ ավելին՝ դրանք դիտվել են հավասարազոր, մեկը մյուսին սնող ուղղություններ: Զարմանալի է այս տեսակետը, որ «Արեւելքը միշտ կասկածի մեջ է եղել, թե արդյոք Հռոմի քաղկեդոնականությունը նեստորականություն չէ»[20]: Հայ-ասորական եկեղեցական հարաբերության հետ սերտորեն առնչվում է Հակոբ Բարադեոսը կամ Ծանծաղո-

13 Տե՛ս **W. Wright**, *Joshua The Stylite*, Cambridge at the university press, 1882, էջ 47-49:

14 Տե՛ս **S. Peter Cow**, *"Armenian christology in the seventh and eighth centuries with particular reference to the contributions of catholicos Yovhan Ojneci, and Xosrovik Targmanic"*: Journal of Theological Studies, 2004, էջ 34:

15 Տե՛ս **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա., Ս. Էջմիածին, 2001, էջ 583:

16 **Ե. Տեր-Մինասյան**, Հայոց Եկեղեցու յարաբերությունները Ասորւոց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 1908, էջ 78:

17 Տե՛ս «Գիրք Թղթոց», Երուսաղեմ, 1994, էջ 149:

18 Տե՛ս «Գիրք Թղթոց», էջ 151:

19 Անդ, էջ 185:

20 **Ե. Տեր-Մինասյան**, Ընդհանուր Եկեղեցու պատմություն, Էջմիածին, 1908, էջ 33:

սը: Հակոբ Բարադեոսը 542 թ. Ալեքսանդրիայի Սեւերյան Թեոդոս պատրիարքի կողմից ձեռնադրվում է Եդեսիայի եպիսկոպոս՝ անբավ եռանդ գործադրելով հակաքաղկեդոնական համայնքները հալածանքների հանդեպ քաջալերելու եւ զորացնելու: Արդյունքում նրա ջանքերով կազմակերպվեց Սեւերյան կամ Հակոբիկյան եկեղեցին, որն իր հոգեւոր գերիշխանության տակ համախմբեց կայսրության սահմաններում գտնվող հակաքաղկեդոնական քրիստոնյաների մեծ մասին: Արեւելքի հոգեւոր բոլոր կարեւոր կենտրոններում ձեռնադրեց իր եպիսկոպոսներին եւ երկու պատրիարքի՝ Անտիոքում եւ Ալեքսանդրիայում[21]: Պատմական անհերքելի փաստերը վկայում են, որ հակոբիկյանները մեծ գործունեություն ծավալեցին նաեւ Պարսկաստանի քրիստոնյաների, հատկապես, «մի բնություն» դավանող ասորիների շրջանում: Ասորիների մեծ մասը, որոնց որդեգրած դավանաբանական դիրքորոշումը հակասում էր Հակոբ Բարադեոսի քարոզած սեւերյան վարդապետությանը, դիմում են Հայոց կաթողիկոսին: Այս առիթով Ներսես Բ. Բագրեւանդցի Կաթողիկոսի (548-557) նախագահությամբ հրավիրվեց Դվինի Բ. ժողովը, որին մասնակցեցին Հայաստանի գրեթե բոլոր եպիսկոպոսները: Ժողովին քննարկվել է Արդիշո Ասորու եպիսկոպոս ձեռնադրվելու հարցը, ինչպես նաեւ Խուժիկի եւ նեստորականների հետ կապված խնդիրներն ու դրանց հետ առնչվող երեւույթները: Հայոց Կաթողիկոսը կատարում է Պարսկաստանի ուղղափառ ասորիների խնդրանքը՝ Արդիշո երեցին եպիսկոպոս օծելով:

Հայ-ասորական եկեղեցական հարաբերությունները Է. դարում նշանավորվեցին նրանով, որ Խոսրով Բ. Փարվեզ թագավորն ստեղծեց հսկայածավալ տերություն, իսկ 614 թ. պարսիկները գրավեցին Երուսաղեմ քաղաքը[22]:

Խոսրով Բ. Փարվեզ թագավորը քաջ գիտակցում էր, որ այս հսկայածավալ երկրում քրիստոնյաներին այլեւս հնարավոր չէր պարտադրել պարսից պաշտոնական հավատը, ուստի փորձեց միջոց գտնել, որի շնորհիվ հնարավոր կլիներ միավորել պարսից գերիշխանությանը ենթակա քրիստոնյաներին, անհրաժեշտ դեպքում հովանավորել նրանց՝ կտրելով հավատակից Բյուզանդիայի քաղաքական շահերից: Պետք է նշել, որ Խոսրով Բ. թագավորը կարող էր հասնել լուրջ հաջողության այն դեպքում, երբ Պարսկաստանի քրիստոնեական եկեղեցիների միջեւ դավանական միություն լիներ, եւ այս միությունը կարող էր նրանց համախմբել ընդդեմ Բյուզանդիայի: Խոսրովն սկսեց միջամտել քրիստոնյաների դավանական վեճերին, քանի որ այն արդեն պետական անհրաժեշտություն էր դարձել[23]: Խոսրով Փարվեզն այս միտումով եկեղեցական ժողով է հրավիրում Տիզբոնում՝ դավանաբանական վեճերը կարգավորելու նշանաբանով[24]: Սակայն վերոհիշյալ եկեղեցաժողովի ստույգ թվականի մասին տարակարծություններ կան, որոնց պատճառը պատմական տարբեր աղբյուրներում զանազան տարեթվերի առկայությունն է: Փորձենք համադրել այդ վկայությունները եւ վերլուծել:

21 Տե՛ս **Jonathan Shepard**, *History of the Byzantine Empire*, էջ 106, 116-117, 166:

22 Տե՛ս **Жан-Клод Шейнэ**, *История Византии*, М., 2006, էջ 57:

23 **Լեո**, հ. Բ., Երեւան,1966, էջ 242:

24 Տե՛ս անդ:

Պարսից ժողովի մասին մեզ տեղեկություն են տալիս հայ պատմագիրներից Սեբեոսն ու Ասողիկը:

Սեբեոսը գրում է. «Յետ գերութեանն Երուսաղէմի, հրաման եւ ամենայն եպիսկոպոսաց կողմանցն Արեւելից եւ Ասորեստանի ժողովել ի դուռն արքունի...»[25]: Սա մեզ ենթադրել է տալիս, որ Պարսից ժողովը տեղի է ունեցել 614 թվականից ավելի ուշ, քանզի Խոսրով Բ. Փարվեզը 614 թ. արդեն գրավել էր Երուսաղեմը: Սակայն Երվանդ Տեր-Մինասյանը, հիմնվելով ասորական աղբյուրների վրա, կարծում է, որ այսպես կոչված «Պարսից ժողովը» տեղի է ունեցել 612 կամ 613 թ.[26]:

Երվանդ Տեր-Մինասյանը հիմնվում է ասորական երեք աղբյուրների վրա. պետք է նշել, որ այդ աղբյուրներից մեկի մեջ արժեքավոր մանրամասնություններ չկան. այստեղ խոսվում է նեստորական եկեղեցու համար կաթողիկոս ընտրելու մասին[27]: Մյուս երկուսը պատմական տեսակետից ավելի արժեքավոր մանրամասնությունների մեջ մտնող եւ վավերագրերով խոսող աղբյուրներ են: Պատմում են, որ Գաբրիել բժշկապետը՝ Պարսից արքունիքում ձեռք բերած ազդեցությամբ հաջողում է երկար տարիներ թափուր թողնել նեստորական եկեղեցու կաթողիկոսական աթոռը, մինչեւ նրանց հոգեւորականները՝ Գեւորգ Իզալացու գլխավորությամբ արքունիք են գնում բողոքելու, եւ այստեղ նրանց առաջարկվում է նախ ապացուցել իրենց հավատի ճշմարիտ լինելը: Նրանք էլ գրավոր ներկայացնում են իրենց դավանությունը, իսկ թագավորը հայտնում է. «Քանի Նեստորի անունն են քարոզում, չեմ թույլ տա, որ գլուխ (կաթողիկոս) ունենան»[28]: Այնուհետեւ գործի դրված բոլոր ջանքերն ի զուր են անցնում. Գեւորգ Իզալացին բանտարկվում է ու խաչի մահվան դատապարտվում[29]: Հետաքրքրական է, որ Երվանդ Տեր-Մինասյանի բերած աղբյուրներում չենք տեսնում, թե նեստորականներին հրավիրած լինեն ժողովին, այլ նրանք են գնացել իբրեւ բողոքավորներ՝ ներկայացնելով իրենց դավանությունը գրավոր: Այս ամենը վերլուծելով՝ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը հանգում է այն կարծիքին, որ 612 կամ 613 թ. Պարսից արքունիքում ոչ մի ժողով տեղի չի ունեցել: Կ. Տեր-Մկրտչյանը հակված է այն կարծիքին, որ Պարսից տերության համար ավելի հրապարակ էր լուծել իր պետության մեջ տարբեր դավանակից քրիստոնյաների հարցը, քան թե նեստորականների կաթողիկոսության խնդիրը վճռել[30]: Կարապետ եպիսկոպոսն առավել հակված է 616 թ., Սեբեոսի եւ Ասողիկի հաղորդած տեղեկություններին: Սրբազան հայրը՝ ընդունելով, որ ժողովը տեղի է ունեցել 616 թ., ցույց է տալիս, թե ինչու սկզբից եւեթ թույլ չի տրվել նեստորականներին մասնակցելու ժողովին՝ բերելով Ասողիկի հաղորդած տեղեկությունը. «Վասն որոյ հրաման եւ արքայ Խոսրով՝ քանդել զամենեցուն նոցա

25 «Սեբէոս եպիսկոպոսի Պատմութիւն», էջ 123: Հմմտ. «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 93 եւ «Միքայէլի Ասորւոց Պատրիարքի Ժամանակագրութիւն», էջ 292-293:

26 «Արարատ», 1907, Բ., էջ 182 եւ 195:

27 Տե՛ս անդ, էջ 182-184:

28 Անդ, էջ 185-186:

29 Տե՛ս անդ, էջ 187:

30 «Գնիք Հաւատոյ Ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյ», Անթիլիաս, 1998, էջ XIV:

զեկեղեցիս. «Թէ Քաղկեդոնին ընդունելի էր, ասէ, ապա թուղթս ընդէ՞ր ոչ փարաւ. եւ այն զի ես ճշմարիտ գրեցի. այլ արտաքոյ է երից սուրբ ժողովոցն»: Եւ սրով սպառնացեալ զամենեսեան զնոսա սպրակել, եթէ ոչ ի բաց դարձցին ի մոլորութենէն եւ ելանիցեն յարքունական պողոտայն»[31]: Հասկանելի է դառնում, թե ինչու ոչինչ չկա նրանց պատմական հիշատակարանների մեջ այս ժողովի մասին, որից նրանք կանխապես մերժված ու արհամարհված էին: Ե. Տեր-Մինասյանը, հակադրվելով Կարապետ եպիսկոպոսին, նշում է, որ Դարսից ժողովը գումարված պիտի լինի ոչ միայն Երուսաղեմի գերությունից, այլեւ Ալեքսանդրիայի առումից հետո, որովհետեւ Սեբեոսը հաղորդում է, թե ժողովին ներկա էին՝ «Զաքարիա Հայրապետն Երուսաղէմի եւ այլ բազում իմաստասէրք, զորս գերեալ էր յԱղեքսանդրաւոց քաղաքէն. որոյ հրաման եւ արքայ Խոսրով՝ արդարութեամբ ի վերայ հասանել, եւ զճշմարիտն ծանուցանել արքայի»[32]: Ե. Տեր-Մինասյանը, հենվելով Տարարինի հաղորդած տեղեկության վրա, կարծում է, որ Եգիպտոսը պարսիկները գրավել են 618 կամ 619 թ: Նա գտնում է, որ եթե Ալեքսանդրիայի առումը նույնիսկ 618-ի կիսամյակում տեղի ունեցած լինի եւ ոչ 619-ին, այն ժամանակ Դարսից ժողովը չի կարող 618-ի աշնանից կամ 619-ից շուտ եղած լինել, որովհետեւ գոնե մի քանի ամիս ժամանակ էր հարկավոր, որ Ալեքսանդրիայի գաղթականները Դարսից մայրաքաղաքը հասնեին, տեղավորվեին եւ ի վիճակի լինեին մասնակցելու կրոնական ու դավանական վիճաբանությունների[33]: Մեզ Ե. Տեր-Մինասյանի առաջ քաշած տեսակետն անհիմն է թվում, որովհետեւ նա պնդում էր, թե «Դարսից ժողովը» եղել է 613-ից ոչ ուշ, իսկ այժմ փաստ է բերում, իբր թե պարսիկները Եգիպտոսը գրավել են 618 կամ 619 թվականներին: Այս տեղեկությամբ չենք հասկանում Ե. Տեր-Մինասյանին՝ ավելի շատ ո՞ր թվականի կողմն է հակված: Այս ամենից զատ, նա կարծում է, թե հայ եպիսկոպոսները «միայն պատահմամբ են ընկել գումարման մէջ»[34]: Կարապետ եպիսկոպոսը վկայակոչելով Ասողիկի հաղորդած տեղեկությունը՝ գրում է. «Դիպեցան անդ ի ժամանակին յայնմիկ արք երկու, եպիսկոպոսք յաշխարհէն Հայոց, արք հաւատարիմք, զորս վասն բռնութեան աշխարհիս էին արձակեալ՝ զի ծանուցեն թագաւորին, Կոմիտաս Մամիկոնէից եպիսկոպոս պատրաստական զպատմութիւնս սրբոյն Գրիգորի եւ այլ եւս վարդապետական պատմութիւնս»[35], հակադրվում է Ե. Տեր-Մինասյանին՝ նշելով, որ նա սխալ է թարգմանել «դիպեցան անդ» բառերը, որը պարզապես նշանակում է՝ գտնվեցին այնտեղ[36]:

Աբրահամ Աղբաթանեցի Կաթողիկոսի ժամանակ (607-615), ինչպես գիտենք, Եկեղեցին ծանր հարված էր կրել. օտար դավանության հարող վրացիներին իր գիրկը դարձնելու ապարդյուն փորձերից հետո հարկադրվեց բանադրել եւ բոլորովին անջատված հրապարակել: Այս ժամանակ առկախ էր մնում դեպի քաղկեդոնականություն հակվող Աղվանից Եկեղեցու խնդիրը: Ինչպես գիտենք, Աբրահամ Կաթողիկոսին ընտրել տվողը

31 **Ստեփանոս Ասողիկ**, էջ 95-96:
32 «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», էջ 123:
33 Տե՛ս **Ե. Տեր-Մինասյան**, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երեւան, 1971, էջ 97:
34 «Արարատ», 1907, Բ., էջ 195:
35 **Ստեփանոս Ասողիկ**, էջ 94:
36 Տե՛ս «Կնիք Հաւատոյ», էջ XV:

եւ Եկեղեցուց բաժանված հայ թեմերը կրկին նրա իշխանության ներքո միացնողը եղել է Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունին: Երեւի նա կհաջողեր նաեւ Վրաց եւ Աղվանից եկեղեցիները հնազանդեցնել, եթե ստիպված չլիներ իր պաշտոնին վերաբերող գործերով վաղաժամ հեռանալ Հայաստանից: Եւ ահա նույն Սմբատ Բագրատունու գլխավորությամբ Դարսից արքունիքում գումարվում է մի ժողով[37], որին մասնակցում են Հայոց աշխարհից ուղարկված երկու եպիսկոպոսներ՝ դավանական գրվածքներ ձեռքներին, իբրեւ երկու վիճող կողմերից մեկը: Վիճող կողմերից մեկը ճշմարիտ կերպով ընդունում է միայն առաջին երեք Տիեզերական ժողովների դավանությունը, մյուսը պաշտպանում է Քաղկեդոնի դավանությունը. քննություն է լինում եւ հաստատվում, որ իրավունքն առաջին կողմինն է: Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը, այս ամենը վերլուծելով, եզրակացնում է, որ հայ եպիսկոպոսների թե՛ արքունիք գալու եւ թե՛ ժողովի գումարման գլխավոր նպատակն էր՝ Հայոց Եկեղեցու դավանությունը, իբրեւ պետության կողմից պաշտոնապես ճանաչված միակ ճշմարիտ քրիստոնեական դավանություն հռչակել տալով՝ նախ միացնել ու հնազանդեցնել իրարից բաժան, բայց եւ իրար ձգտող տարրերը[38]: Շարունակելով իր պնդումները՝ Ե. Տեր-Մինասյանը կարծում է, որ պատմական տվյալներին եւ Խոսրով Փարվեզի խառնվածքին բոլորովին հակառակ է ընդունել, թե նա քրիստոնյաների դավանությունների նրբություններով կարող էր զբաղվել այն ձեւով, ինչպես նկարագրում է Սեբեոսը: Իր ենթադրությամբ միակ, փոքր ի շատե հավանական տեսակետը այն կարող է լինել, որ հենց Է. դարում իրենց Եկեղեցու առաջնորդներին կորցրած Դարսից պետության քրիստոնյաները (նեստորականներ, Եդեսիայի միաբնակներ, հայեր) հետամուտ էին նոր ընտրության առիթ ձեռք բերելու, որովհետեւ հակառակվում էին միմյանց եւ աշխատում Դարսից Դռան առաջ միմյանց դեմ արգելք հանդիսանալ, հատկապես բժշկապետ Գաբրիելը, որ միաբնակների կողմն էր, առաջ էր գալիս շփոթությամբ, եւ մեկի դրդմամբ մյուսից հավատո գիր էր պահանջվում, որոնք մինչ այսօր մնացել են թե՛ հայ եւ թե՛ ասորական նեստորական նամակագրություններում: Ե. Տեր-Մինասյանը կարծում է նաեւ, որ սխալ է Խոսրով Փարվեզին որեւէ համակրություն վերագրել դեպի քրիստոնեական դավանանքը, ինչպես նկարագրում է Սեբեոսը: Ըստ նրա՝ դա երեւում է նաեւ նրանից, որ Գաբրիել բժշկապետի մահից հետո, միաբնակների՝ մայրաքաղաքում ունեցած վանքերն էլ ավերվում են, եւ 624-ից թափուր է մնում նաեւ միաբնակների կաթողիկոսական աթոռը: Ճշմարտությունն այն է, որ Գաբրիել բժշկապետի, Շիրին թագուհու եւ Սմբատ Բագրատունու ազդեցությամբ նախ՝ հալածանքի են ենթարկվում նեստորականները եւ Կաթողիկոս ընտրելու արտոնություն են ձեռք բերում միաբնակները, ինչպես եդեսացիք, այնպես եւ հայերը[39]: Թե՛ Ե. Տեր-Մինասյանը եւ թե՛ Կ. եպս Տեր-Մկրտչյանն ընդունել են, որ, հավանորեն, Կոմիտաս եւ Մատթեոս եպիսկոպոսները Դարսից Դուռ գնացել են կրկին կաթողիկոսական ընտրության հաստատության համար[40]: Քննարկե-

37 Տե՛ս «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», էջ 123: Հմմտ. **Ստեփանոս Ասողիկ**, էջ 93:

38 «Գնիք Հաւատոյ», էջ XVI:

39 Տե՛ս **Ե. Տեր-Մինասյան**, Պատմա-բանասիրական հետազոտություններ, էջ 95-96:

40 Տե՛ս «Գնիք Հաւատոյ», էջ XXII: Հմմտ. **Ե. Տեր-Մինասյան**, Պատմա-բանասիրական հետազոտություններ, էջ 95:

լով Ե. Տեր-Մինասյանի եւ Կ. եպիսկոպոսի տեսակետները՝ կարելի է եզրակացնել, որ այդ ժողովը Երուսաղեմի գրավումից առաջ չէր կարող կայանալ այն պատճառով, որ արյաց արքայից արքան կլանված էր Բյուզանդիայի դեմ պատերազմով, ուստի հազիվ թե ժամանակ նվիրեր դավանական խնդիրներին: Մենք կարծում ենք, որ արյաց արքան նշված ժողովի միջոցով կամենում էր պարզել, թե ովքեր են բյուզանդամետ ուժերը՝ սպառնալով մահավճիռ կայացնել բոլոր նրանց հանդեպ, որոնք կհետեւեն քաղկեդոնականության ու նեստորականությանը[41]: Հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ նշված ժողովին մասնակցած Կոմիտաս Աղցեցին ժողովականներին ներկայացավ եւ Հայաստանի իր հավատացյալ հոտի անունից հանդես եկավ իբրեւ Հայոց Կաթողիկոս[42]: Ինչպես հայտնի է՝ Կոմիտասը Կաթողիկոս է ընտրվել 615-ին, ուստի հիշյալ ժողովն այդ թվականից առաջ չէր կարող կայացած լինել: Մաղաքիա արք. Օրմանյանը կարծում է, որ 615-ին Կոմիտասը գլխավորել է Հայոց Եկեղեցու եպիսկոպոսներն, սակայն պաշտոնապես Կաթողիկոս է ձեռնադրվել Տիգրոնի ժողովից հետո[43]:

Ընդունելով, որ Պարսից ժողովը տեղի է ունեցել 616-ին՝ քննենք, թե ինչ էր տեղի ունեցել ժողովում: Ինչպես արդեն նշել ենք, ժողովին մասնակցել են բազմաթիվ հոգեւորականներ, որոնց թվում՝ Երուսաղեմից գերված Զաքարիա պատրիարքը, Ալեքսանդրիայից գերեվարված իմաստասերներ եւ ուրիշներ: Հայաստանից ժողովին ներկա էին Կոմիտաս Մամիկոնյան եւ Մատթեոս Ամատունի եպիսկոպոսները: Խոսրով թագավորը ժողովում վերահսկողներ նշանակում է Սմբատ Բագրատունուն եւ արքունի բժշկապետ Գաբրիելին: Առաջին հավաքի ժամանակ ժողովականների միջեւ խիստ տարաձայնություններ են ծագում: Այդ հայտնի է դառնում Խոսրովին, եւ նա հրամայում է չանդրադառնալ բազմաթիվ աղանդներին, այլ քննարկել միայն Նիկիայի (325 թ.), Կ. Պոլսի (381 թ.), Եփեսոսի (431 թ.) եւ Քաղկեդոնի (451 թ.) ժողովների դավանությունների հարցը: Կարծիք են հայտնում նաեւ Զաքարիա Հայրապետը եւ Ալեքսանդրիա քաղաքից գերեվարված իմաստասերները: Վիճաբանությունից հետո մերժվում է Քաղկեդոնի ժողովի դավանությունը, ճշմարիտ են ճանաչվում միայն առաջին երեք Տիեզերական ժողովների վճիռները: Շատ հետաքրքրական է Կ. եպս. Տեր-Մկրտչյանի այն տեսակետը, թե դժվար Զաքարիա պատրիարքն իրեն վերագրված խոստովանություն արած լինի, կամ էլ Քաղկեդոնի կողմնակիցները սիրով համակերպվեին ժողովի որոշումներին, բայց նա մեծ ուշադրության է արժանացնում այն հանգամանքը, որ ժողովին վճռական դեր է կատարել Կավատ արքայի մատանիով կնքված Հայոց դավանության գիրը[44]: Հավատո գիրը ոչ միայն հաստատում էր, որ Կավատը եւ իր որդի Խոսրովը ճանաչել են Հայոց դավանությունը եւ վավերագրել, այլ նաեւ, որ Վրաստանը եւ Աղվանքը նույն դավանությունն են ունեցել եւ այժմ օտար ուսման հետեւելով՝ հակառակվում են հայրենի ավանդությանը եւ Պարսից արքաների որոշումներին: Այսպիսով, պարզ է դառնում, որ հայերին հաջողվել

41 «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», էջ 123: Հմմտ. **Ստեփանոս Ասողիկ**, էջ 94:
42 «Արարատ», 1896, ԺԱ.,էջ 535:
43 Տե՛ս **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա., էջ 768-769:
44 Տե՛ս «Կնիք Հաւատոյ», էջ XVI:

է գանձարանից հանած թղթով լռեցնել քրիստոնյա հարեւաններին եւ ստիպել նորոգելու իրենց հետ նախկին միաբանությունը[45]: Մենք չունենք ոչ մի տեղեկություն, որ վրացիները վերադարձել են հին հավատքին, բայց ենթադրում ենք, որ նրանք կարճ ժամանակով հպատակվել են արքայական հրամանին եւ Հայոց հավատն ընդունել, մինչեւ Հերակլ կայսեր արշավանքները:

Պարսից ժողովը դրական վերաբերմունք ցուցաբերեց Հայ Եկեղեցու նկատմամբ: Դա պայմանավորված էր նաեւ ժողովին Սմբատ Բագրատունու եւ Պարսկաստանի քաղկեդոնամերժ քրիստոնյաների առաջնորդ, արքունի բժշկապետ Գաբրիելի մասնակցությամբ, որոնց այնտեղ էր ուղարկել Խոսրով Փարվեզը: Եւ այս ժողովի արդյունքը եղավ այն, որ Խոսրովը հրաման արձակեց. «Եթէ ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կալցին»[46]:

Հետաքրքրական է կարճառոտ կերպով տեսնել, թե ինչպե՛ս են նկարագրում Հայոց Եկեղեցու զանազան ներկայացուցիչները իրենց հավատո դավանանքը Դվինի 554 թ. ժողովից հետո: Մեզ հետաքրքրում է՝ արդյոք պահպանվել է որեւէ տեղեկություն Սեւերիոսի եւ նրա «ապականության պիղծ վարդապետության» մասին: Տեսնում ենք, որ արդեն Հովհաննես Բ. Կաթողիկոսի (557-574) եւ իր եպիսկոպոսների թղթում հերձվածողների անունների մեջ առկա է նաեւ Սեւերիոսը իր ապականության մասին գրքերով[47]: Է. դարի սկզբին Վրթանես Քերթողը գրում է Վրաց Կյուրիոն կաթողիկոսին. «Ոչ միայն ի Նեստորի խմորոյն ունիմք պատուէր ի հարցն եւ յուղղափառ վարդապետացն մերոց հեռանալ եւ նզովել, այլ եւ զԵւտիքոս եւ զԵւնոմիոս, եւ զՍեւերոս ... եւ զայլ նմանիս նոցա...»[48]: Նույն բանն ենք տեսնում նաեւ 602 կամ 603 թ. գրված «Կանոնք որ եղան ի Դունի, մինչդեռ մտածութիւն էր ժողովելոյ եպիսկոպոսացն կարգել Կաթուղիկոսի, եւ խափանեցան այնմ անգամ» գրության սկզբում[49]: Եւ ահա այսպիսի գրության ենք հանդիպում Կոմիտաս Կաթողիկոսի թղթում: Հայոց դավանական թղթերում մերժվում են Սեւերիոսի եւ Հուլիանոս Հալիկառնասցու վարդապետությունները: Այդպես է, օրինակ, Կոմիտաս Կաթողիկոսի թղթում՝ ուղղված պարսից պետության ասորի միաբնակ քրիստոնյաներին: Ինչպես Ասողիկը տեղեկացնում է՝ Կոմիտաս Մամիկոնյան եւ Մատթեոս Ամատունյաց եպիսկոպոսները Պարսից ժողովին ունեին. «Ընդ ինքեանս պատրաստական զպատմութիւնս սրբոյն Գրիգորի եւ այլ եւս վարդապետական պատմութիւն»[50]: Սմբատ Բագրատունու եւ ասորի հոգեւոր հայրերի խնդրանքով Կոմիտաս Կաթողիկոսը գրավոր ներկայացրեց Հայոց Եկեղեցու դավանանքը: Այս գրով նա պետք է արյաց արքային համոզեր, որ Հայ Եկեղեցու դավանական կողմնորոշումը հակաքաղկեդոնական է: Կոմիտաս Կաթողիկոսի՝ ժողովին ներկայացրած հավատի գիրը՝ «Վասն հաւատոյ» հանգանակը, կտրականապես մերժում էր քաղկեդոնականությունը եւ հիմնավորում Հայ Եկեղեցու որդեգրած հավատամքը:

45 Տե՛ս անդ, էջ XVII:
46 «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», էջ 125:
47 Տե՛ս «Գիրք Թղթոց», էջ 213:
48 Անդ, էջ 280:
49 Տե՛ս անդ, էջ 292:
50 **Ստեփանոս Ասողիկ**, էջ 94: Հմմտ. «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», էջ 124:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի դավանություն է պաշտպանում Հայոց Կոմիտաս Կաթողիկոսն իր թղթի մեջ: Ուսումնասիրելով նրա հավատո գիրը՝ համոզվում ենք, որ այս գիրը միանշանակ միաբնակ վարդապետություն է պարունակում[51]: Այստեղ կարևոր է, որ մինչ Եւտիքեսն ու Սեւերիոսը բոլոր մյուս հերձվածողների հետ հիշատակվում են եւ անուն առ անուն իրենց վարդապետության հետ մեկտեղ նզովվում, Հուլիանոս Հալիկառնասցու անունն ամենեւին չի հիշատակվում[52]: Բայց հետաքրքրական է, որ նամակի մեջ շատ կտորներ ուղղակի հուլիանյան են հնչում: Օրինակ՝ «եւ ի վերջին ժամանակս Միածին Որդին Աստուծոյ, կամօք Հօր եւ իւր եւ սրբոյ Հոգւոյն, վասն մեր եւ վասն մերոյ փրկութեան խոնարհեցոյց զերկինս եւ էջ յարգանդ կուսին, եւ առ մարմին ի Մարիամայ սրբոյ կուսէն Աստուածածնէ, եւ միացոյց զանմեռն ընդ մեռոտն, եւ զապականացուն ընդ անմահ աստուածութեան իւրոյ խառնեաց եւ միացոյց, եւ արար անապական՝ զի առանց հակառակութեան նուազն ի լաւէ անտի օրհնեսցի[53]: Շարունակության մեջ կարդում ենք. «Միաւորութեամբ ոչ սոսկ մարդկային բնութեամբ, այլ միաւորութեամբ տնօրէնութեանն աստուածավայելչաբար... Ապրակեցաւ եւ չարչարեցաւ՝ ո՛չ սոսկ մարդոյն ասեմ զչարչարանս, զխաչն եւ զմահն, եւ ո՛չ զնշանագործութիւնսն միացնում Բանին Աստուծոյ, այլ միաւորութեամբն տնօրէնութեամբ. քանզի Բանին Աստուծոյ մարմնացելոյ են ամենայն բարձրագոյնքն եւ խոնարհագոյնքն»[54]: Եւ ամենավերջում մեզ համար շատ կարեւոր այս փաստը. «Նզովեցին եւ զՍեւերիոս, որ ասաց թէ մարմինն Քրիստոսի ապականացու էր մինչեւ գյարութիւնն, եւ յետ յարութեանն արար զնա անապական»[55]: Պարզ երեւում է, որ այս հատվածը միաբնակ վարդապետություն է, եւ ամբողջ թուղթն էլ ուղղված է թե՛ Քաղկեդոնի եւ թե՛ Սեւերիոսի վարդապետության դեմ: Կոմիտաս Կաթողիկոսի՝ «Պարսից ժողով»-ում ներկայացրած դավանական թղթի մեջ անվանապես հիշատակվում են 9 ասորի միաբնակ եպիսկոպոսներ, որոնք համաձայնություն էին հայտնել հայոց դավանանքին. «Եւ որք միաբանին ընդ Հայոց հաւատոյն ի կողմանս Ասորեստանեայց, Կամյիշով մետրապալիտ, եւ այլք տասն եպիսկոպոս...»[56]: Այդ եպիսկոպոսներն էին. «Ընդ նմին հաւատացան նմա փականք արքայութեանն յերկնից եւ յերկրի, որոյ եղերուք դուք որդիք եւ ժառանգաւորք նորին աթոռոյ, ուղիղ հաւատով եւ բարբառք խոստովանութեամբ՝ Յամբիշոյ մետրապօլիտն, Պօղոս Արուեստան եպիսկոպոս, Գաբրիէլ Տաճկա եպիսկոպոս, Յովնան Հերթա եպիսկոպոս, Սիմօն Նինուէի եպիսկոպոս, Գաբրիէլ Քարմա եպիսկոպոս, Սաբասիոյ Կոհինիհորական եպիսկոպոս, Բենիամին Սրընգի եպիսկոպոս, Ստեփանոս Արզնոյ եպիսկոպոս, եւ այլ բազում եպիսկոպոսունք, եպիսկոպոսակցօք եւ սարկաւագօք...»[57]:

Միով բանիվ, Պարսից ժողովի առաջ բերած գրության արդյունքն այն էր, որ Աստ-

51 «Արարատ», 1896, ԺԱ., էջ 532-535:
52 Ե. **Տեր-Մինասեան**, Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ, էջ 163:
53 «Արարատ», 1896, ԺԱ., էջ 532:
54 Տե՛ս անդ, էջ 533:
55 Անդ, էջ 534:
56 «Սերէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», էջ 125-126:
57 «Արարատ», 1896, ԺԱ., էջ 535:

բեստանի ուղղափառ եպիսկոպոսներ Մար-Մարութան ու Պետրոսը Դվին են գալիս՝ Կոմիտաս Կաթողիկոսին գիր ներկայացնելու եւ իրենց համաձայնությունը հայտնելու Հայոց հավատին: Այս ասորիների նամակից հայտնի է արդեն, որ նրանք միանշանակ միաբնակ վարդապետության հետեւողներ են: Պարզապես կբերենք մի փոքր հատված այդ գրից. «Եւ կամ որք ասեն, թէ առաչօք կամ կարծելով երեւեցաւ Քրիստոս աշխարհի եւ ո՛չ ճշմարտապէս նմանեցաւ մեզ առանց մեղաց. նզովեմք զնոսա...»[58]:

Պարսից ժողովը, ինչպես տեսանք, ավարտվեց միաբնակների օգտին, եւ այդպիսով շատ բարձրացավ Հայոց Կաթողիկոսի հեղինակությունն ու դիրքը:

574 թ. Երուսաղեմի գահին բարձրացած Հովհաննես եպիսկոպոսը պարծենում էր, թե Հայոց ժողովի արձակած երկու գրություններին ծանոթանալուց եւ նրանց մեջ ոչ ուղղափառ վարդապետություն գտնելուց հետո հայերին հալածել է Երուսաղեմից. «Զորս ես նզովեցի եւ հալածեցի եւ քաղաքս դեռ այրէր զվանս մի Հայոց, մինչեւ հալածեալքն առ թագաւորն գնացին՝ ասելով, եթէ հալածեաց զմեզ Հայրապետն Երուսաղէմի»[59]: Եւ այսպիսով արգելվում է հայերի մուտքը Տիրոջ քաղաք: Արդ, Սեբեոսի պատմության մեջ պահված է Կոմիտաս Կաթողիկոսի նշանավոր թղթակցությունը Զաքարիա պատրիարքի գերությունից հետո Երուսաղեմում տեղապահի պաշտոն վարող Մոդեստոս երեցի հետ, որի համաձայն, հայերը երկար դադարից հետո ոչ միայն սկսել են այցելել Երուսաղեմ, այլեւ կարեւորվել է նրանց դերը. Հայոց Կոմիտաս Կաթողիկոսի պաշտպանությանն են դիմում, նրա աչքը Երուսաղեմի վրա քաղցր պահել ցանկանում, Երուսաղեմի աղքատների եւ Զարչարանաց տեղում եկեղեցի կառուցելու համար օգնություն խնդրում[60]:

Ամփոփ կարելի է ասել, որ Հայ Առաքելական Եկեղեցին իր հովանու տակ պետք է միաբաներ Պարսկաստանի բոլոր քրիստոնյաներին: Անգամ Երուսաղեմի Եկեղեցին ստիպված էր առժամապես ապավինել Հայոց Եկեղեցու հովանավորությանը՝ ըստ երեւույթին հրաժարվելով նախկինում որդեգրած քաղկեդոնամետ ուղեգծից: Հուսկ, կարելի է նշել, որ Պարսից ժողովից հետո ավելի բարձրացավ Հայ Եկեղեցու հեղինակությունը Պարսկաստանի քրիստոնյաների շրջանում[61]: Պատահական չէ, որ Կոմիտաս Կաթողիկոսը կառուցեց Հռիփսիմեի տաճարը: Հատկանշական է նաեւ այն փաստը, որ Կոմիտաս Կաթողիկոսի վարկը բարձրացնող մի անվավեր գրության համաձայն՝ նա մեկնել է Կ. Պոլիս, որտեղ հույն պատրիարքին բացատրություններ է տվել Հայ Եկեղեցու ծիսադավանական հատկանիշների մասին՝ պատասխանելով նրա երեք հարցերին, այն է՝ ինչո՞ւ հայերը Քրիստոսի ծնունդը դեկտեմբերի 25-ին չեն տոնում, ինչո՞ւ են Ս. Աստված երգին ավելացնում «որ խաչեցար» բառերը եւ ինչո՞ւ են Ս. Պատարագի համար անթթխմոր հաց օգտագործում: Կոմիտաս Կաթողիկոսը հանգամանալից պատասխաններով գոհացնում է պատրիարքի հետաքրքրասիրությունը՝ պաշտպանելով Հայ Եկեղեցու դավանական սկզբունքները[62]:

---

58 «Արարատ», 1896, ԺԱ., էջ 536:

59 «Արարատ», 1896, Ե., էջ 252:

60 «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», էջ 83-88:

61 Տե՛ս **Վ. Վարդանյան**, Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005, էջ 298:

62 Տե՛ս «Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 484-497: